

**ԹԱՓԱԳՅՈԶ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ
(Խոսվածք)**

Ելել ա, չի կել իրեք մարդ, եղ իրեք մարդը վեր են կենում, գնում աշխատանքի: Շատ են գնում, թե քիչ են գնում դրանք, որ մութը վրա ա հասնում, դրանք տենում են մի տեղ ծուխ ա վեր ըլում:

Ասում են.— Գնանք, շենվիկ է, գնանք էն շենվիկումը կոավարվենք, ըժում կերթանք մեզ համար գործ կգտնենք:

Դրանք գնում են. որ մոտենում են շենվրկիցն, մեկ էլ տեսնում են, որ ոչխար կա, ոչխարի կշտին՝ մեկ չորան:

Սրանք ասում են.— Գնանք էս չորանի կշտին մնանք, քշերըս կառավարվենք, ոավոտը բարի լուսու հետ ճամփի կընկնենք:

Որ դրանք գնում են, մոտանում չորանիցը, տենում են, որ մի հատ աչքանի ա, ձկատի կես տեղը մի հատ աչք ունի:

Էս մարդիկը զարմանում են ու իրար ասում.— Էս տեսակ էլ մարդ կըլի՞, մի աչքանի:

Դրանք ըտենց ասում են ու աղաք են գնում:

Գնում են, ասում.— Չորան ախպէ՞ր, բարի օր քի՞:

Էս Մեկաչքանին ասում ա.— Աստծու բարին ձե՞զ:

Էղ Մեկաչքանին էղ իրեք մարդին ոչխարի հետ քշում ա ու տանում էրի մեջ անում: Մեկ մենձ ջաղացքար գձում էրի դրանք: Ըժում ինքը զալի նստում, միտք անում, միտքը, վեկենում ու մի մենձ շամփուր բերում կրակումը դնում: Բերում ա էղ շամփուրը մի իծի միջքում տալի, բերում էղ կրակի վրա դնում, էղ էծը խրովում ա, ինքը մենակ ուտում: Էլի էղ շամփուրը դնում ա կրակի մեջը, ինքը ըժում քնում: Էղ իրեք մարդը զարմանում են:

Ասում են.— Էս ի՞նչ թափուր մարդ էր, որ մենք դրան դոնադ ենք կել, էղ մի եքա էծը կերավ, մեզ մի թիքա տվուց ոչ:

Էղ Մեկաչքանին շատ ա քընում, թե քիչ ա քնում, վեր ա կենում էղ մարդկերանց մեկին շորահան ա անում, միջքումը շամփուրը տալի, էղ մարդին էլ ա խրովում, ուտում: Էն էրկու մարդը միտք են անում, որ. «Ըստեղանց դուս ըլելու հնար չկա, մեզ էլ ուտիլ պտի»: Էղ խոսքերումը Մեկաչքանին վեր ա կենում ու դրանց մեկին էլ շորահան անում: Նրա միջքումն էլ շամփուրը տալիս ա էլի, դրան էլ խրովում, ուտում ա, շամփուրը եղ դնում կրակումը էղ Մեկաչքանին, ինքը քնում:

Էս մեկ մարդը մտածում ա թե. «Էս ի՞նչ հնար գտնեմ, որ հնար լինի.— ասում ա.— Էս շամփուրը տքացել ա, վերցնեմ ու սրա մեկ հատիկ աչքի մեջտեղը տամ, մի աչք ունի, էն էլ քոռացնեմ»:

Դա ըտենց ասում ա ու շամփուրը վերցնում, էղ Միաչքանու էն մի հատ աչքի միջումը տալի: Վեր ա թոշում էղ Միաչքանին, բղավում, դես ու դեն ծուլ ըլում, ման զալի էրի միջին, գտնում չի էղ մարդին: Գալիս ա էղ իրան տեղը քնում: Էղ մարդն էլ մտածում ա, թե. «Ի՞նչ հնար գտնիմ, ուավոտը դուս ըլնիմ, էն անիրավի ձերիցը պրծնիմ»:

Տենում ա, որ ընդեղ մի մենձ տրուտ կա ոխչարի միջին:

Ասում ա.— Էս մենձ տրուոր ես կմորթեմ, ուավոտը դրա տկի մեջը կմտնեմ, դուրս կզամ: Դա վեր ա կենում, տրուոր մորթում, ինքը տկի մեջը մտնում, պոզերն էլ վրեն թողում, ինչպես տրուոր սադ ըլի:

Ուավոտը լիսանում ա, եղ Մեկաչքանին գնում ա էրի դուռը բաց անում, ջախչի քարը դեն գձում, ոխչարները անց են կենում, ինքը ձեռները քսում ա, որ թե տղեն զա՞ բռնի, թե չի զա՞ քարը եղ գձի, ըժում ըլի էրը ման զա գտնի:

Համա ոխչարներն անց կենալիս, եղ տղեն էլ իծի տկի մեջ կամաց-կամաց գնում ա.

Մեկաչքանին ձեռը քսում ա անց կենալիս, տեսնում ա, որ տրուռն ա, ըտեղ ասում ա.—

Սատկած տրո՞ ոռ, նոր է՞ ս անց կենում:

Եղ տղեն էլ ասում ա.— Հազր աչքը հանել եմ ու ես եմ անց կենում:

Մեկաչքանին էլ ասում ա.— Այ տղա, նոր ես անց կենում, արի մի մտանիք տամ՝ մատղ դի, ամեն ժամանակ ինձ միտոյ կցցես:

Նա էլ ասում ա.— Ո՞ւմ որ խափել ես, գնա նրան խափի:

Մտանիքը վրա արա՝ մատս դնեմ:

Մեկաչքանին ձեռիցը մտանիքը հանում ա ու վրա անում:

Եղ տղեն վերցնում ա մտանիքն ու իրա մատը դնում: Մեկ էլ տենում ա, որ մտանիքիցը մի ժնձիլ կախ ելավ, ու ծերը գնաց էն Մեկաչքանու ձեռը:

Եղ տղեն ասում ա.— Վա, ես ի՞նչ կավ, տո՞՝ ես անիրավի ձեռիցը ո՞նց եմ պրծնելու:

Տեսնում ա, որ Մեկաչքանին ժնձիլի ծերիցը քաշում ա, ինքն էլ դրբա էդ Մեկաչքանին գնում ա:

Ասում ա.— Ի՞նչ անեմ, որ պրծնեմ:

Դանակը հանում ա ու իրան մատը կտրում ա: Մատանին՝

մատը հետը Մեկաչքանին քաշում ա իրա կրոշտը: Եղ տղեն թողնում ա, փախչում: Փախչելիս տեղը դա մի ծակով դվեր ա ընկնում: Դա տեսնում ա, որ ըտեղ շատ մութը տեղ ա, ասում ա.— Տեր իմ աստված, ես ի՞նչ մեղը ունեմ, որ ես իմ աղաքն ա զալի, էդուար չարչարվում եմ:

Գիշերվա մի փախտը էդ տղեն տենում ա, որ հրես մի ճրազի լիս էրևաց: Դա վեր ա կենում ու եղ լսին գնում: Որ գնում ա հասնում ա էդ լսին, տենում ա մի Գել մի բան ա ուտում, էդ Գելը, որ դրան տենում ա, փախչում ա, դա էդ Գիլի պոչիցը բռնում ա: Բռնում ա, Գելը քաշում դրան էլ հետը լիս աշխար հանըմ:

Տենում ա էրկու ջրի արանքում ա, ասում ա.— Տեր աստո՞ծ, ջրիցն էլա, մրջուրն ընկա, ես ջրերի արանիքը ո՞նց եմ դուրս զալու:

Ես մարդը կռանում ա, որ ջուր խմի, մեկ էլ տենում ա, որմի տկլոր բան էդ ջրիցը դուրս էկավ ու իրա մեջքիցը կպավ:

Դա վեր ա կենում, էդ տկլոր իսանին դես ա թափ տալի,

դեն ա թափ տալի, չի պոկ զալի: Դա գնում ա, որ խաղող ուտի, էդ տկլոր իսանը դրա զլիսին խփում ա, թե. «Ծելքին ես պետք ա ուտեմ»: Նա ուտում ա, եղնա ինքնա ուտում: Դա եդ գնում ա, թե ջուր խմի, էլետ էդ տկլոր մարդը զլիսին տալիս ա, թե. «Ծելքին ես պետք ա խմեմ»:

Ես մարդը մտածում ա, թե. «Ես ի՞նչ հնարք գտնեմ, որ սա իմ մեջքից պոկ զա»:

Մտածում ու գնում ա էն խաղողիցը քաղում, ընտեղ մի գուշ քար ա ըլում, լցնում ա մեջը, ձմրուում, ըժում ասում ա.— Մի հինգ օր թողեն ըստեղ, արևը թթվացնի, ըժում կխմացնեմ:

Մի հինգ օր անցնում ա, էդ մարդը գնում ա սուտ գլուխը կռացնում որ խմի, էդ մեջքի տկլոր իսանը զլիսին խփում ա, թե. «Պետք ա ես ծելքին խմեմ»:

Էն մարդն էլ ուրախանում ա, թողնում ա, որ խմի: Ասում ա.— Խմում ես խմի, էլ իի՞ ես խփում զլիսիս:

Եղ տկլոր իսանը խմում ա ու էդ մարդի մեջքիցը վեր ընկնում:

Եղ մարդը ասում ա.— Էկար իմ մեջքիցս կպար, ինձ էսքան չարչարմունք տվիր: Հըմի տես քո զլուխը ինչ կրերեմ:

Ասում ա, սո՞ւր թե կտաս, ով կտենու՝ դա կտենու, ով չի տենու՝ դա կտենու, եղ կըտասը: Եղնա
վեր ա ունում ոտներիցը ու ջրի կիսի վրա շըպքրտում, ընկնում ա ջրի մեջը:

Հըմի տենում ա, որ մենակ մնաց, ասում ա.—Տեր աստո՞ծ, հըմի ո՞նց ես դուս զամ էս ջրի
միջիցը:

Էղ տղեն ման գալով ջրի դրադումը, մեկ էլ տենում ա, որ մի մեծ գոմշի կաշի կա: Էղ կաշվի
մեջը փթաթվում ա ու ընկնում ջրի մեջը:

Ասում ա.—Զուրը տակը չի անիլ, ինձ վրա թոփ կանի:

Զուրը տանում, դուրս ա զձում դրան: Կաշվի միջիցը դուրս ա զալի ու ճամփա ընկնում, գնում:
Շատ ա գնում, թե թիշ ա գնում, գնում ա մի գեղի մեշ, են գեղի մեջը մի անհիշատակ մարդ ա
ըլում: Էս տոյին նա ֆոքեռորդի ա վերցնում, բերում ա հըրսանիք ա անում:

Ասում ա.—Որդի՝, դու ինձ հմա որդի, ես քեզ հմա հեր:

Նրանք հասան իրենց մուրազին, դուն էլ հասնես քու մուրազին:

Բարին ըստի, չարը՝ անօրենի օջախումը:

Աստծանե իրեք խնձոր վեր ընկավ. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ ալամ աշխարհին: